**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Մեծամորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար խմելու ջրամատակարարման ցանցերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/24 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի մայիսի 23-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/24 ծածկագրով պայմանագրում 2023 թվականի սեպտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի /համաձայնագրի/ պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ՝** գնման առարկայի ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով ֆինանսական միջոցների նախատեսում:

**Փոփոխության նկարագրություն՝** Մեծամորի համայնքապետարանի և «ՎԱԼ+ԱԼ» ՍՊԸ - «Արտ Պլյաս» ՍՊԸ կոնսորցիումի միջև կնքված Պայմանագրի շրջանակում 2023 թվականի սեպտեմբերի 25-ին կատարված փոփոխությունների արդյունքում հաստատվել է հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում աշխատանքների կատարման ծավալաթերթ նախահաշիվը, օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը, համաձայն՝ 2023 թվականի սեպտեմբերի 25-ին կնքված Համաձայնագիր 3-ի համապատասխանաբար Հավելվածներ N 1-ի, N 2-ի, N 3-ի:

**Փոփոխության հիմնավորում՝** 2023 թվականի մայիսի 23-ին կնքված N ՀՀԱՄՄՀ-ԲՄԱՇՁԲ-23/24 ծածկագրով պայմանագրը կնքվել էր ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, իսկ Մեծամորի համայնքապետարանի կողմից աշխատանքի կատարման ձեռքբերման պահանջը չի դադարել և աշխատանքների կատարման ձեռքբերման համար Մեծամորի համայնքապետարանի 2023 թվականի բյուջեով և գնումների պլանով նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի արդյուքնում տեղի է ունեցել փոփոխություն նշյալ պայմանագրի մեջ, պահպանելով պայմանագրի 8.5 և 8.15 կետերով սահմանված պահանջները:

Պատվիրատու՝ **Մեծամորի համայնքապետարան**